ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԲՆԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԱԾԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Համաձայնագրի մասնակիցներ,

նկատի ունենալով արտակարգ իրավիճակների առաջացման հնարավորությունը, որոնց հետեւանքները չեն կարող վերացվել Համաձայնագրի մասնակիցներից մեկի ուժերով եւ միջոցներով, եւ այդ կապակցությամբ համակարգված գործողությունների անհրաժեշտությունը,

հաշվի առնելով բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների անդրսահմանային ազդեցության հնարավորությունը, որը պահանջում է դրանց կանխման եւ հետեւանքների վերացման համաձայնեցված գործողությունների իրականացում,

ընդունելով արտակարգ իրավիճակների կանխմանը եւ հետեւանքների վերացմանը ուղղված միջոցառումների իրականացման համար վթարային-փրկարարական ուժերի, նյութատեխնիկական, բժշկական, պարենամթերային, ֆինանսական եւ տեղեկատվական ռեսուրսների համատեղ օգտագործման անհրաժեշտությունը,

ձգտելով արտակարգ իրավիճակների կանխման եւ հետեւանքների վերացման հիմնախնդիրների լուծման ժամանակ գիտատեխնիկական հարաբերությունների պահպանմանը եւ զարգացմանը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագիրը սահմանում է բնական աղետների, տեխնածին վթարների եւ աղետների հետեւանքով ծագող արտակարգ իրավիճակների կանխմանն ու հետեւանքների վերացմանը մասնակցության եւ փոխգործակցության իրականացման կարգը:

ՀՈԴՎԱԾ 2

Համաձայնագրի մասնակիցների փոխգործակցության հիմնական սկզբունքներն են.

արտակարգ իրավիճակների կանխման եւ դրանց ժամանակ գործողության համար նախատեսված համակարգերի եւ մարմինների ինտեգրացիա՝ ներառյալ նման իրավիճակներում գործողությունների ազգային ծրագրերի համակարգվածությունը,

օրենսդրության նորմերի մերձեցում եւ համաձայնագրերի մշակում, որոնք անհրաժեշտ են հատուկ բնագավառներում փոխգործակցության եւ համագործակցության համար,

միջազգային կազմակերպություններում համատեղ գործողությունների իրականացում եւ մասնակցություն համապատասխան ուղղվածության միջազգային ծրագրերում,

Համաձայնագրի մասնակցի պատասխանատվությունը արտակարգ իրավիճակի առաջացման եւ հետեւանքների համար,

արտակարգ իրավիճակների առաջացման ժամանակ կանխիչ գործողությունները,

ներպետական մակարդակով որոշման ընդունման ինքնուրույնությունը:

ՀՈԴՎԱԾ 3

Համաձայնագրի մասնակիցները իրականացնում են փոխգործակցություն հետեւյալ հիմնական ուղղություններով.

արտակարգ իրավիճակների կանխմանն ու հետեւանքների վերացմանն ուղղված փոխգործակցության համակարգի ստեղծման եւ կատարելագործման աշխատանքների համակարգում (կազմակերպում),

արտակարգ իրավիճակների կանխման հարցերով միջպետական նպատակային եւ գիտատեխնիկական ծրագրերի մշակում եւ իրագործում՝ ներառյալ բնակչության, նյութական եւ մշակութային արժեքների, շրջակա միջավայրի պաշտպանության հարցերը,

հսկողություն ներունակ վտանգավոր օբյեկտների, շրջակա միջավայրի վիճակի նկատմամբ, արտակարգ իրավիճակների առաջացման եւ դրանց մասշտաբների կանխատեսում,
փոխադարձ ծանուցում ներունակ վտանգավոր օբյեկտների եւ շրջակա միջավայրի վիճակի, առաջացող արտակարգ իրավիճակների, դրանց զարգացման ընթացքի եւ հնարավոր հետեւանքների, դրանց վերացման համար ձեռնարկվող միջոցառումների մասին,
արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացում եւ Համաձայնագրի մասնակիցների տարածքներում տուժած բնակչության տեղավորման համար միջոցների ձեռնարկում,
արտակարգ իրավիճակների կանխման եւ հետեւանքների վերացման հարցերով մասնագետների պատրաստում եւ որակավորման բարձրացում:

ՀՈԴՎԱԾ 4

Համաձայնագրի մասնակիցները մշակում եւ իրագործում են միջպետական նպատակային եւ գիտատեխնիկական ծրագրեր, որոնք համաձայնեցվում եւ հաստատվում են Համաձայնագրի այն մասնակիցների կողմից, ովքեր մասնակցում են դրանց իրագործմանը:

ՀՈԴՎԱԾ 5

Համաձայնագրի մասնակիցները միմյանց տրամադրում են տեղեկություններ ուժերի եւ միջոցների մասի, որոնք կարող են օպերատիվ կերպով ներգրավվել Համաձայնագրի մասնակիցների տարածքներում վթարային-փրկարարական աշխատանքների անցկացման համար՝ համապատասխան հարցում ստանալու դեպքում:
Համաձայնագրի մասնակիցը բնական եւ տեխնածին բնույթի խոշորածավալ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում կարող է անհրաժեշտ օգնության համար դիմել Համաձայնագրի մյուս մասնակիցներին՝ նշելով հարցվող օգնության կոնկրետ տեսակները եւ ծավալները:
Օգնության համար ներգրավված ուժերի եւ միջոցների ղեկավարությունը իրականացնում է Համաձայնագրի այն մասնակիցը, որի տարածքում իրականացվում են վթարային-փրկարարական աշխատանքները:
Արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացմանը, կենսապահովման հարցերի լուծմանն ուղղված ջանքերի ավելացման համար այլ ուժերի եւ միջոցների ներգրավման անհրաժեշտության դեպքում Համաձայնագրի մասնակիցները մշակում եւ Համագործակցության Կառավարությունների ղեկավարների Խորհրդին են ներկայացնում համապատասխան առաջարկություններ:
Համաձայնագրի մասնակիցների ուժերը եւ միջոցները ներգրավվում են վթարային-փրկարարական, վթարային-վերականգնողական եւ այլ աշխատանքների կատարման համար՝ օգնություն հայցող Կողմի հաշվին կատարված ծախսերի հետագա փոխհատուցման պայմանով կամ այլ համաձայնեցված ձեւով:

ՀՈԴՎԱԾ 6

Համաձայնագրի մասնակիցները պարտավորվում են միմյանց օպերատիվ կերպով սույն Համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ տրամադրել:

ՀՈԴՎԱԾ 7

Արտակարգ իրավիճակի արդյունքում պատճառված վնասի համար պատասխանատվությանը վերաբերող կարգը, կանոնները եւ ընթացակարգերը կկարգավորվեն առանձին համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 8

Համաձայնագրի մասնակիցները սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ վեճերը կարգավորում են բանակցությունների կամ, իրենց ընտրությամբ, այլ խաղաղ միջոցների օգնությամբ:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի դրույթների գործնական իրագործման նպատակներով ստեղծվում է Բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդ՝ բաղկացած Համաձայնագրի մասնակիցների լիազոր ներկայացուցիչներից՝ յուրաքանչյուր պետությունից մեկական:
Բնական եւ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների միջպետական խորհուրդը իր աշխատանքում ղեկավարվում է Համագործակցության Կառավարությունների ղեկավարների խորհրդի հաստատած Կանոնակարգով:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության բոլոր մասնակից պետությունների ստորագրման համար:
Սույն Համաձայնագրին, նրա բոլոր մասնակիցների համաձայնությամբ, կարող է միանալ ցանկացած այլ պետություն:

ՀՈԴՎԱԾ 11

Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն կարող է դուրս գալ Համաձայնագրից՝ համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին: Նման մասնակցի համար Համաձայնագրի գործողությունը դադարում է վերոհիշյալ ծանուցումը ավանդապահի ստանալու օրվանից 12 ամիս հետո:

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կատարված է Մինսկ քաղաքում 1993 թվականի հունվարի 22-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը դրա հաստատված պատճենները կուղարկի սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հունվարի 22-ից: